ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

179
(2659)

13 դեկտեմբերի երեքշաբթի 2022
2022տպագրության ԺԱ տարի

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 153

«Այսօր մենք տեսնում ենք հետեւողական գործողություններ, որոնք ավելի ու ավելի առարկայական են դարձնում մտավախությունները, որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղում իսկապես ցեղասպանություն է կազմակերպում, նախապատրաստում»,- երեկ՝ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 4-րդ գլոբալ ֆորումի բացման ժամանակ, հայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Սա՝այն դեպքում, երբ տեւական ժամանակ է՝իշխանություններն առաջ են տանում խաղաղության թեզը՝ասելով, թե հնարավոր է խաղաղության դարաշրջան բացել Ադրբեջանի հետ: 2022 թվականի մայիսի 12-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր. «Մենք խաղաղության օրակարգ որդեգրելու եւ իրականացնելու մանդատ ենք ստացել մեր ժողովրդից նախորդ տարի տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններում, որը միջազգային հանրության կողմից միանշանակ գնահատվել է որպես ազատ եւ ժողովրդավարական չափանիշներին համապատասխան: Եվ մենք վճռական ենք այդ օրակարգը լիարժեք իրականացնելու, վճռական ենք մեր երկրի եւ մեր տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելու առումով»: Իր հերթին այս տարվա հոկտեմբերին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հայտարարում էր. «Կա պայմանավորվածություն մինչեւ տարեվերջ Ադրբեջանի հետ ստորագրել խաղաղության պայմանագիր, դելիմիտացնել հայ-ադրբեջանական սահմանը»: Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր կնքելը որպես նպատակ այլ առիթներով բազմիցս բարձրաձայնել է նաեւ Նիկոլ Փաշինյանը: Ստացվում է՝մի կողմից՝Նիկոլ Փաշինյանը խոսում է խաղաղության դարաշրջան բացելու մասին, մյուս կողմից՝ադրբեջանական կողմի ագրեսիվ գործողությունները շարունակվում են: Սա իր հերթին նշանակում է, որ Նիկոլ Փաշինյանն ունակ չէ կատարելու իր խոստումները, եւ իր հայտարարությունները մանիպուլացնող բնույթ ունեն:



Երեւանի քաղաքապետարանը 21-րդ դարում չի հրաժարվում խորհրդային ավտոմեքենաներից, ավելի կոնկրետ՝«ժիգուլիներից»: ArmLur.am-ը տեղեկացավ, որ քաղաքապետարանի աշխատակազմը մտադիր է վարձակալել թվով 8 տրանսպորտային միջոց, եւ այդ նպատակով քաղաքապետարանը մտադիր է ծախսել 33 մլն 504 հազար դրամ: Այսպես, մեզ պաշտոնական փաստաթղթերից հայտնի դարձավ, որ քաղաքապետարանի աշխատակազմին հաջորդ տարվա համար տրանսպորտային միջոցներով ապահովելու նպատակով անհրաժեշտ է վարձակալությամբ տրամադրել հետեւյալ մակնիշի ավտոմեքենաները՝2008 թվականի արտադրության «Նիսսան X-Տեռռա», 2007թ. արտադրության «Գազ-3102-501», 2004թ. արտադրության «Վազ-21214», 2006թ. արտադրության «Գազ-31105-120», 2012թ. արտադրության «Կիա Սեռատո, 2003թ. արտադրության «Գազ-3102»: Իհարկե, փաստաթղթերով քաղաքապետարանը պահանջել է՝վարձակալության ողջ ժամանակահատվածում ավտոմեքենաները պետք է լինեն տեխնիկապես սարքին եւ արտաքինից լավ վիճակում, որպեսզի շաբաթվա մեջ՝5-օրյա աշխատանքային գրաֆիկով, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ շաբաթ, կիրակի եւ տոն օրերին օգտագործվեն: Հարց է՝ինչքանով կարող է 2004 թվականի սովետական արտադրության ավտոմեքենան որակյալ ծառայություն մատուցել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ քաղաքապետարանը նախատեսում է նաեւ հաջորդ տարվա համար վարձակալել թվով 2՝2014թ. արտադրության «IRAN KHODRO TU5 1.6» մակնիշի ավտոեմեքենա: Այս երկու ավտոմեքենայի վարձակալության համար քաղաքապետարանը նախատեսում է ծախսել 14 մլն 496 հազար դրամ գումար: Չի բացառվում, որ այս ավտոմեքենաները ինչ-որ մեկին են պատկանում, որոնց դիմաց 650 հազար ԱՄՆ դոլար ամանորյա զարդարանքի վրա ծախսող քաղաքապետարանը գումար է դուրս գրում: Հարց է մնում՝ արդյոք 21-րդ դարում արդյունավետ է «Վազ 21»-ով երթեւեկելը:

ՀՀ ոստիկանությունը դեռ նախարարություն չի դարձել, բայց Նիկոլ Փաշինյանի թիմում արդեն նախարարի փնտրտուք եւ թեկնածուների լոբբինգի գործընթաց է մեկնարկել: «Ժողովուրդ» օրաթերթը կառավարությանը մոտ կանգնած իր աղբյուրներից տեղեկացավ, որ այս պահի դրությամբ 4 թեկնածուի անուն է շրջանառվում իբրեւ ներքին գործերի ապագա նախարար՝ ՊՎԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյան (որը կառավարության մի մասում ունի աջակցություն), ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյան (որը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությունում ունի համակիրներ (ԱԻՆ-ը լուծարվում է, մտնում ՆԳՆ տիրույթ)), ԱԺ ՔՊ պատգամավոր Արմեն Խաչատրյան (որը խորհրդարանում ունի աջակցություն՝ի դեմս ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովի մի քանի անդամների) եւ ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյան, որին ՀՀ կառավարությունից վստահեցրել են, թե հենց նա է լինելու ՆԳ ապագա նախարարը (նրա եւ Նիկոլ Փաշինյանի միջեւ մտերմությունն առանձնակի ջերմություն ունի): Ահա այսպես, Լաչինի միջանցքը փակ էր, Արցախը գտնվում է հումանիտար աղետի շեմին, սակայն ՔՊ-ում ՆԳ նախարարի փնտրտուք է:

ՀԱՊԿ ԱԽ խորհրդի հյուրանոցային կեցության եւ հյուրասիրության ծառայություններ անցկացնելու համար ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայությունը 2 մլն 80 հազար դրամի չափով պայմանագիր է կնքել «Երեւան» հյուրանոցի հետ: Մեկ այլ պայմանագրով՝ «Ա.Մ.Ջ.-111» ՍՊԸ-ից կատարվել է 7 մլն 457 հազար դրամի գնում՝ ՀԱՊԿ ԱԽ խորհրդի նիստի շրջանակներում տրանսպորտային ծառայություններ իրականացնելու համար: Կրկին ՀԱՊԿ ԱԽ խորհրդի հյուրանոցային կեցության եւ հյուրասիրության ծառայություններ անցկացնելու համար ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայությունը մեկ այլ պայմանագիր է կնքել ««Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ-ի հետ, որն այս անգամ արժեցել է 6 մլն 595 հազար դրամ: «Սարգիս Միքայելյան» ԱՁ-ի հետ էլ կնքված 1 մլն 450 հազար դրամ արժողությամբ պայմանագրով իրականացվել են տեխնիկական աշխատանքներ, օրինակ՝15 հատ դրոշակաձող է գնվել, եւ իրականացվել է դրոշների վերանորոգում: Այս պահին առկա տվյալների համաձայն՝ստացվում է, որ ՀԱՊԿ ԱԽ խորհրդի նիստն այստեղ անցկացնելու նպատակով ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայությունը ՀՀ պետական բյուջեից ծախսել է 17 մլն դրամից ավելի գումար, եւ ամեն ինչ իրականացվել է «մեկ անձից գնումներ» սկզբունքով, հենց նույն սկզբունքով, որից ժամանակին դժգոհում էին ներկայիս իշխանությունները, համարում կոռուպցիայի որջ: Հիմա Նիկոլ Փաշինյանը նույն կոռուպցիոն մեխանիզմներով է կառավարում բոլոր ոլորտները, ինչ նախկինում քննադատում ու մերժում էր:

ՍԱԴՐԱՆՔՆԵՐ

ԼՈՒՌ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

ՀՀ Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանն այն տեսակետին է, որ թեեւ ՀՀ իշխանություններն այս պահին Արցախում տեղի ունեցող իրադարձությունները (երեկ առավոտվանից փակ է Ստեփանակերտ-Գորիս ավտոճանապարհը) փորձելու են բացառապես ռուս խաղաղապահների պատասխանատվության դաշտ գցել, բայց պարզ է, որ ամեն պահ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության լուռ համաձայնությամբ է տեղի ունենում: «Ժողովուրդ» օրաթերթը ստեղծված իրավիճակի շուրջ զրուցել է ՀՀ Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանի հետ:

-Պարոն Աբրահամյան, ադրբեջանցիները կրկին փակել են Հայաստանն Արցախին կապող միակ մայրուղին: Դուք ի՞նչ տեղեկություններ ունեք եւ ի՞նչ գնահատական եք տալիս կատարվածին:

-Իրավիճակը իսկապես բարդացել է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ճանապարհի մեջտեղում վրաններ էին տեղադրվել: Ադրբեջանը, բնականաբար, փորձում է նաեւ ուժ ցույց տալ, եւ ադրբեջանական զորքերը եւս կարող են միջամտություն ցույց տալ: Անկախ այն հանգամանքից, թե այս ակցիան ինչ քողի ներքո է իրականացվում, ակնհայտ է, որ Ադրբեջանը սկսել է տարբեր սադրանքներ իրականացնել: Ադրբեջանը երկու պահանջ է ներկայացրել՝ առաջինը՝ այդ ճանապարհին ռենտգեն-սարքեր տեղադրել եւ վերահսկել բեռնափոխադրումները, իսկ երկրորդը՝ բնապահպանական խնդիրների ներքո (ինչը շինծու է) փորձ է արվում կանգնեցնել հանքարդյունաբերական ընկերությունների աշխատանքը: Դա մեծաթիվ վնասներ կհասցնի, սակայն սա չէ գլխավոր նպատակը, եւ Ադրբեջանը փորձում է մի քանի թեւերով աշխատել:

-Հայաստանի իշխանություններից մինչեւ այս պահը որեւէ արձագանք չկա, բացի հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանի հայտարարություններից (հարցազրույցն անցկացնելու պահին-խմբ.): Ինչո՞ւ չեն արձագանքում: Ի վիճակի չե՞ն:

-Իմ կարծիքով՝ իշխող ուժի քաղաքական կուրսն է հնարավորինս անտարբերություն դրսեւորել հնարավոր բոլոր մակարդակներում: Սա չեմ կարծում, թե միայն հումանիտար բնույթի խնդիր է եւ կարող է բերել միայն հումանիտար ճգնաժամի: Հայաստանի իշխանություններն այստեղ բոլոր մակարդակներում անելիքներ ունեն, եւ ինձ թվում է, որ հաջորդ քայլը կլինի այն հանգամանքը, որ Հայաստանի իշխանությունները կհայտարարեն, թե, օրինակ, ռուս խաղաղապահները չեն իրականացնում իրենց առաքելությունը, կամ դա իրենց գործառույթների ներքո է, եւ փորձելու են պատասխանատվությունն իրենց վրայից դուրս բերեն: Պետք է արձանագրել, որ միջանցքի անվտանգ շահագործման պատասխանատուն Ռուսաստանի Դաշնությունն է, եւ նրանք այդ առաքելությունն իրականացնում են ռուս խաղաղապահների միջոցով: Վերջին շրջանում խնդիրներ կան, եւ, բնականաբար, նրանց պատասխանատվությունը եւս պետք է դիտարկել, բայց դա չի նշանակում, որ Հայաստանն ու Արցախը պետք է իրենց ձեռքերը լվանան այս ամեն ինչից եւ նայեն միայն դիտորդի կարգավիճակում: Հայաստանի եւ Արցախի անելիքներն այստեղ իրոք մեծ են: Հայաստանի իշխանությունների այս պասիվ պահվածքը ցույց է տալիս, որ այս ամենը տեղի է ունենում իրենց լուռ համաձայնության ներքո:

-Չե՞ք բացառում, որ եթե ռուս խաղաղապահները փորձեն ուժի միջոցով ճանապարհ բացել, ապա ադրբեջանցիներն էլ իրենց հերթին ուժ կկիրառեն, եւ բախումներ կսկսվեն: Ի՞նչ վտանգներով է հղի այս ամեն ինչը:

-Բնական է, որ ամեն ինչ պետք է անել այս իրավիճակը խաղաղ հանգուցալուծման բերելու համար, սակայն սա չի նշանակում, որ Ադրբեջանը պետք է ճանապարհ փակի, սադրանքների դիմի, եւ դա կանխելու համար սկսենք նրանց պահանջները բավարարել: Իրավիճակին պետք է շատ լրջորեն վերաբերվել: Այս պահին միայն հայտնի է հեռախոսազրույցների մասին: Միայն արձագանքելով բավարարվելը սխալ է, եւ այս տեղի ունեցածի հիմքը շատ ավելի վաղ է դրված:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

ԲԱՔՈՒՆ ՆՈՏԱ Է ՀՂԵԼ ՄՈՍԿՎԱ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը Ռուսաստանին նոտա է հանձնել՝ կապված Ղարաբաղի տարածքում տեղի ունեցած իրադարձությունների հետ. այս մասին հայտարարել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության մամուլի ծառայության ղեկավար Այխան Հաջիզադեն:

Նա նշել է, որ նոտայում ընդգծվում է «ռուսական խաղաղապահ կոնտինգենտի կողմից Ադրբեջանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության՝ ղարաբաղյան շրջանում իր գործունեության խստիվ պահպանության անհրաժեշտությունը»:

«Ադրբեջանական կողմը բազմիցս դիմել է ռուսական խաղաղապահ զորամիավորման հրամանատարությանը՝ կանխելու բնական ռեսուրսների ապօրինի շահագործումը ադրբեջանական տարածքներում, որտեղ ժամանակավորապես տեղակայված է ռուսական խաղաղապահ զորախումբը, նաեւ վերացնելու միջավայրի համար բացասական ազդեցության հետեւանքները: Շատ դեպքերում ադրբեջանական կողմի այս հորդորները մնացել են անպատասխան: Խաղաղապահները ոչ մի միջոց չեն ձեռնարկել կանխելու Ադրբեջանի կողմից բնական ռեսուրսների ապօրինի շահագործումը»,- ասել է Հաջիզադեն:

Վերջինս նաեւ նշել է, որ, Ադրբեջանի ստացած տեղեկությունների համաձայն, իբր, աճում է բնական ռեսուրսների, հատկապես՝ ոսկու հանքավայրի եւ պղնձամոլիբդենային հանքավայրի «ապօրինի շահագործումն ու թալանը, ինչպես նաեւ բնապահպանական իրավիճակի սրումը»: «Դեկտեմբեր ամսից բանակցություններ են ընթացել Ադրբեջանի համապատասխան պետական կառույցների ներկայացուցիչների եւ ռուսական խաղաղապահ կոնտինգենտի միջեւ: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի ներկայացուցիչները փորձել են այցելել այս երկու տարածքներ, որտեղ «ապօրինի հանքարդյունաբերություն» է իրականացվում, սակայն այդ ուղեւորությունը կանխվել է: Այն ֆոնին ռուսական խաղաղապահ զորախումբը ոչ մի գործողություն չի ձեռնարկել, ուղեւորությունը կանխվել է տեղի բնակիչների նախապես ծրագրված գործողությամբ: Այդ կապակցությամբ Ադրբեջանի ԱԳՆ-ն նոտա է հղել ռուսական կողմին: Մենք եւս մեկ անգամ կոչ ենք արել թույլ տալ անարգել մուտք գործել այդ դաշտեր»,- ասել է Հաջիզադեն:

Հիշեցնենք, որ մեկ շաբաթ առաջ Արցախը Հայաստանին կապող մայրուղին ադրբեջանցիները բնապահպանական ակցիայի տակ պահեցին ավելի քան երեք ժամ եւ պատճառաբանությամբ, թե Արցախում օգտակար հանածոներն ապօրինի շահագործում են բնապահպանական ռիսկերով: Հիշեցնենք նաեւ՝ երեկ հայտնի դարձավ, որ ադրբեջանական կողմի՝ Դրմբոնի եւ Կաշենի հանքավայրեր այցը համաձայնեցված չի եղել ԱՀ իշխանությունների հետ, եւ ՌԴ խաղաղապահ զորախմբի կողմից որոշում է կայացվել դադարեցնել շրջայցը

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ՎՐԻՊՈՒՄԸ» ՉԻ ՀԱՆԴՈՒՐԺԵԼ

Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի ընտրությունից հետո կառավարական կաբինետում միանգամից երկու հրաժարական եղավ. նախ՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, այնուհետեւ ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը հայտարարեցին, որ հրաժարականի դիմում են գրել: ArmLur.am-ը երեկ գրել էր, որ թե՛ նախարարի, թե՛ փոխվարչապետի (վերջինս նաեւ Բրյուսովի անվան համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն է) հրաժարական ներկայացնելն ուղիղ կապված է ԲՊՀ-ի ռեկտոր Կարինե Հարությունյանի վերընտրվելու հետ, քանի որ իշխող քաղաքական թիմն ու անձամբ Նիկոլ Փաշինյանը հրահանգած են եղել, հետեւաբար նաեւ ակնկալել են, որ իրենց ցանկալի թեկնածուն՝ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը պետք է ռեկտոր ընտրվի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ռեկտորի ընտրությունների ժամանակ նիստը վարող փոխվարչապետ Մաթեւոսյանը խիստ լոյալություն է ապահովել: Անընդհատ շեշտել է, որ պետք է արդար ու անկողմնակալ ընտրություն կազմակերպել: Կարճ ասած, տպավորություն է ստեղծել, որ ինքը որեւէ մեկի կողմից չէ: «Բավական հետաքրքիր է հոգաբարձուների խորհրդի անդամ, ԿԳՄՍ փոխնախարար Ժաննա Անդրեասյանի քվեարկությունը: Այն, իհարկե, գաղտնի է եղել, ու որեւէ մեկը հաստատ չի կարող ասել՝ ինչպես եւ ում օգտին է քվեարկել տիկին փոխնախարարը, բայց չի բացառվում, որ Հարությունյանի թեկնածությանը Անդրեասյանը նույնպես կարող էր կողմ քվեարկել, որպեսզի ներիշխանական ինտրիգներ հյուսվեն, ու ինքը վերջապես կարողանա զբաղեցնել նախարարի աթոռը: Իհարկե, իր քվեարկության մասին միայն ինքը գիտի, բայց այս սցենարը նույնպես բացառել չի կարելի, քանի որ բուհում ներքին խոսակցություններն այնպիսին են եղել, որ ձայներն, ըստ երեւույթին, հավասար՝ 10/10 հարաբերակցությամբ կբաշխվեն, ու հարցը փակուղի կմտնի: Բայց, փաստորեն, 12/8 հարաբերակցությամբ Հարությունյանը վերընտրվել է»,- ասաց «Ժողովուրդ» օրաթերթի՝ բուհին մոտ կանգնած աղբյուրը: Իհարկե, չի բացառվում, որ Համբարձում Մաթեւոսյանի հրաժարականի պատճառներից նաեւ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության կազմի խայտառակ ընտրությունները լինեն. այս մի «վրիպումը» նույնպես իշխանությունը չի հանդուրժել:

«ԿԱՏԱԼԻԶԱՏՈՐ»–ՆԵՐԸ ՀԱՆՈՒՄ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը ստուգում է բոլոր պետական կառույցներին եւ պաշտոնյաներին կցված ավտոմեքենաները: Բանն այն է, որ ՊՎԾ-ն կասկածներ ունի, որ միգուցե պաշտոնյաների մեքենաների խլացուցիչները կամ բոլորին հայտնի «կատալիզատոր»-ները գողացել են ու վաճառել, գումար աշխատել: Բանն այն է, որ այս տարվա նոյեմբերի 28-ին ՊՎԾ-ն պաշտոնապես հայտարարեց, որ վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում ստացվել են տվյալներ, որ ՀՀ տարածքից ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիտիկ չեզոքացուցիչների (կատալիզատոր) թանկարժեք մետաղներ պարունակող կերամիկական թափոնների արտահանման, ինչպես նաեւ այդ գործընթացում եւ թափոնների առուվաճառքի ոլորտում առկա են խնդիրներ, ինչի կապակցությամբ նախաձեռնվել եւ իրականացվել են վերահսկողական գործառույթներ: Ըստ ՊՎԾ-ի՝ արձանագրվել են առերեւույթ հանցագործության հատկանիշներ պարունակող խախտումներ, դրանց արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքները ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ հետագա ընթացքն ապահովելու համար:

ԱՆԿՈՒՄԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Տրդատ Սարգսյանի հարսանեկան արարողությունը տեղի է ունեցել «Դվին» ռեստորանային համալիրում, քավորն էլ եղել է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Սուրեն Պապիկյանը, արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը նստել են մի սեղանի շուրջ իրենց կանանց հետ: Տեղեկացանք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը անտրամադիր է եղել, ոչ մեկի հետ չի խոսել եւ, կարծես թե, նրա մասնակցությունը հարսանեկան արարողությանը ձեւական է եղել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ բոլոր ներկա ՔՊ-ականների համար զարմանալի է եղել, որ Տրդատ Սարգսյանը կարող էր իրեն այդպիսի ճոխ հարսանեկան արարողություն թույլ տալ: Ներկաները միաբերան ընդգծել են, որ հարսանեկան արարողությունն իսկապես շքեղ եւ ճոխ է եղել: Ընդգծենք նաեւ, որ Տրդատ Սարգսյանի հարսանեկան արարողության հյուրերը երկար չեն մնացել, եւ դրա պատճառներից մեկն այն է եղել, որ Նիկոլ Փաշինյանն է անտրամադիր եղել: Ներկաների մի հատվածն ասում է, թե սահմանային լարված իրավիճակն է նրա տրամադրության անկման պատճառը եղել. հենց այդ օրն են փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանն ու ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն իմացել, որ իրենք պետք է ինքնակամ հրաժարական տան եւ հեռանան մեկը փոխվարչապետի, մյուսը՝ նախարարի պաշտոնից: Դումանյանը հարսանեկան արարողությանը ներկա է եղել դստեր հետ: Եթե ամփոփելու լինենք, ապա կարող ենք ընդգծել, որ հարսանեկան արարողությանը ներկա բոլոր պաշտոնյա հյուրերն անտրամադիր են եղել:

ՀԱՅՑԸ ՄԵՐԺՎԵԼ Է

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ընտանիքում «կռիվ է ընկել»: Նախարարի ընտանիքին պատկանող ընկերությունը՝ «Արմֆարմացիա»-ն, դիմել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողով եւ խնդրել Առողջապահության նախարարության նկատմամբ տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցել արգելված պետական օժանդակության եւ պետական մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի հատկանիշներով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Վանաձորի եւ Գորիսի բժշկական կենտրոնների կողմից կազմակերպված գնումների մրցույթների հաղթող ճանաչվել է դեղ ներմուծող եւ վաճառող «Վագա ֆարմ»-ը, ինչը դժգոհություն է առաջացրել «Արմֆարմացիա»-ի մոտ: Այս ընկերությունը դիմել է Առողջապահության նախարարություն եւ հայտնել, որ «Վագա ֆարմ»-ի կողմից գնման պայմանագրերով նախատեսված եւ մատակարարված «Ֆրաքսիպարին» դեղը գրանցման հավաստագրի իրավատիրոջ մասով չի համապատասխանում ՀՀ-ում գրանցված նույնանուն դեղի գրանցման իրավատիրոջը, եւ պահանջել է պարզաբանում տալ: Իր հերթին նախարարությունից պարզաբանել են, որ «Վագա ֆարմ» ընկերության կողմից ներմուծվող «Ֆրաքսիպարին» դեղի գրանցման վավերապայմանները, բացառությամբ գրանցված հավաստագրի իրավատիրոջ վերաբերյալ տեղեկատվության, համապատասխանում են ՀՀ-ում գրանցված նույնանուն դեղի վավերապայմաններին: Այս պատասխանից հետո «Արմֆարմացիա»-ն դիմել է հանձնաժողով, սակայն անպտուղ: Ըստ հանձնաժողովի՝ նախարարության կողմից «Վագա ֆարմ» ընկերությանը պետական օժանդակության տրամադրման փաստը հաստատված չէ, եւ որոշվել է Առողջապահության նախարարության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժել:

ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐ

ՀՐԱՏԱՊ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «2020 թվականի նոյեմբերի 10-ից ադրբեջանցի զինվորականների կողմից գերեվարված Վիգեն Էուլջեֆյանի կինը՝ Լինդա Էուլջեֆյանը, ահազանգել է, որ գերեվարված Վիգեն Էուլջեֆյանը ենթարկվում է ծեծի, խոշտանգումների, անմարդկային եւ դաժան վերաբերմունքի եւ ունի հրատապ օգնության կարիք: 1 շաբաթ առաջ էլ Վիգենի հետ խոսել է մայրը: Վերջինս պնդում է, որ որդու կյանքին վտանգ է սպառնում, քանի որ հիվանդ է եւ հրաժարվում է սնունդ ընդունել. Վիգենը 95 կգ էր, ապօրինի բանտարկության ընթացքում դարձել է 45 կգ: Հեռախոսազրույցի ընթացքում որդին խնդրել է մորը փրկել իրեն, ազատել մահից:

Ադրբեջանական այս հանցագործությունները ամբողջությամբ խախտում են «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» 1949 թվականի օգոստոսի 12-ի ժնեւի կոնվենցիայով ամրագրված արգելքները: Մասնավորապես՝ Կոնվենցիայում արձանագրված է, որ ռազմագերիների հետ պետք է մշտապես վարվել մարդասիրաբար: Գերության մեջ պահող տերության ցանկացած ակտը կամ անգործությունը, որոնք հարուցում են նրա իշխանության տակ գտնվող ռազմագերու մահը, կամ ռազմագերու առողջությունը դնում լուրջ սպառնալիքի տակ, արգելվում են եւ կդիտվեն որպես սույն Կոնվենցիայի լուրջ խախտումներ: Գերության մեջ պահող տերությունը պարտավոր է անվճար ապահովել ռազմագերիների պահպանումը ու նաեւ բժշկական օգնությունը, որ կպահանջի նրանց առողջական վիճակը: Օրական հիմնական կերաբաժինն իր որակով, քանակով, բազմազանությամբ պետք է բավարար լինի այն բանի համար, որպեսզի պահպանվի ռազմագերիների առողջության բարվոք վիճակը, եւ թույլ չտրվեն նրանց քաշի կորուստ կամ երեւույթներ՝ կապված սննդի անբավարար լինելու հետ:

Գերության մեջ պահող տերությունն է պատասխանատվություն կրում ռազմագերիների հետ վարվելակերպի համար, ուստի հրատապ գրություններ եմ ուղարկել միջազգային իրավասու օղակներին, որոնցով՝

- պահանջել եմ հստակ քայլեր եւ թիրախային գնահատական հայ գերի Վիգեն Էուլջեքյանի նկատմամբ կատարվածի վերաբերյալ,
- խնդրել եմ իրենց ուժերի առավելագույնը ներդնել հայ ռազմագերիների հայրենադարձման գործընթացը հնարավորինս շուտ իրականացնելու նպատակով՝ դաժան, անմարդկային վերաբերմունքից եւ խոշտանգումներից նրանց ձերբազատելու համար,
- խնդրել եմ միջնորդել իմ եւ Վահե Էուլջեքյանի հեռախոսային զրույցի կազմակերպմանը:

Միջազգային կառույցներին եւս մեկ անգամ ահազանգում եմ հայ ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց հայրենադարձումը Ժնեւյան կոնվենցիայով սահմանված պարտավորություն է Ադրբեջանի համար, որի իրականացման համար ձեւավորվել է միջազգային հանրության ուղիղ միջամտության հրատապ անհրաժեշտությունը՝ ի պաշտպանություն հայ ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց կյանքի իրավունքի: Գործե՛ք, քանի դեռ շատ ուշ չէ»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՆՃԱՆԱԿԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Դեկտեմբերի 8-ի կառավարության նիստում վարչապետը խոսեց «Արտաքին հետախուզական գործունեության եւ արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքի եւ հարակից օրենքների նախագծերի փաթեթի մասին: Ըստ այդմ՝ Հայաստանում կստեղծվի արտաքին հետախուզական ծառայություն, որը կգործի վարչապետի ենթակայության ներքո: «Նախագծի անցումային դրույթներում նախատեսվում է կարգավորում այն մասին, որ արտաքին հետախուզության ծառայության ստեղծմանն ու կայացմանն ուղղված օրենսդրական փաթեթի ընդունումից 3 տարի անց արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մյուս մարմինները եւ ստորաբաժանումները կդադարեն այդպիսի գործունեություն իրականացնել՝ այս գործառույթն ամբողջովին փոխանցելով նոր ծառայությանը»,- այդ ժամանակ նիստին նշել էր ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Գրիգոր Մինասյանը: Համապատասխան նախագիծն արդեն ներկայացվել է Ազգային ժողով: Հիմնավորման մեջ նաեւ նշվում է, որ տարածաշրջանում միայն Հայաստանն է, որ առայժմ չունի առանձին հետախուզական ծառայություն: Օրենքի հոդված 18-ն ամրագրում է, թե ով է իրավասու նշանակել արտաքին հետախուզության պետին:

«Հոդված 18. Ծառայության ծառայողներին պաշտոնի նշանակումը

1. Ծառայության պետին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է վարչապետը:

2. Ծառայության պետի տեղակալներին Ծառայության պետի առաջարկությամբ պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է վարչապետը»:

Նկատենք, որ թե՛ Պաշտպանության նախարարությունում, թե՛ Ազգային անվտանգության ծառայությունում գոյություն ունեն համանման գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներ, որոնցում ծառայությունը հանդիսանում է զինվորական ծառայություն, առկա է քաղաքական որոշում՝ ստեղծել պետական ծառայության նոր տեսակ, որը չի հանդիսանա զինվորական ծառայություն: Հնարավորություն կընձեռվի Արտաքին հետախուզության ծառայությունը համալրել նաեւ այլ գերատեսչություններում աշխատող հանրային ծառայողներով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊՈՒՏԻՆ–ԱԼԻԵՎ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց է ունեցել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ. այդ մասին հայտնում են Կրեմլի մամուլի ծառայությունից:

Երկու երկրների ղեկավարներն անդրադարձել են ղարաբաղյան հարցի շուրջ առկա բանակցություններին: «Քննարկվել են Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ին, հունվարի 11-ին եւ նոյեմբերի 26-ին ձեռք բերված պայմանավորվածությունների ընթացքը՝ ներառյալ տնտեսական եւ լոգիստիկ կապերի վերականգնումը Կովկասում»,- ասվում է հայտարարությունում: Հաղորդագրության մեջ նշվում է, որ երկու երկրների ղեկավարները պայմանավորվել են շարունակել բանակցությունները:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՑԱԽԻՑ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԵՆ

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը սոցցանցի իր էջում գրում է. «Ադրբեջանական կողմն արդեն երկրորդ անգամ փակել է Արցախը Հայաստանին եւ աշխարհին կապող միակ մայրուղին՝ կեղծ ու մտացածին պատճառաբանություններով:

Նախ՝ մեզ համար խիստ անընդունելի է Ադրբեջանի այդ ագրեսիվ վարքը, որի միջոցով ահաբեկում է մեր բնակչությանը եւ հարվածի տակ դնում մեր կենսական իրավունքներն ու շահերը: Սա աննախադեպ մարտահրավեր է մեր պետության ու ժողովրդի համար, եւ կոչ եմ անում ողջ հասարակությանը համախմբվել ու հանգստություն ցուցաբերել, քանի որ Ադրբեջանի իշխանությունների նպատակներից մեկն էլ Արցախում ներքին պառակտման ու խուճապի հրահրումն է:

Կարեւոր անելիքներ ունեն նաեւ միջազգային հանրության այլ դերակատարները, քանի որ ադրբեջանական կողմի գործողությունները կոպտորեն խախտում են միջազգային իրավունքի հանրահայտ նորմերը, եւ Ադրբեջանը ձգտում է Արցախի բնակչության էթնիկ զտման ու հայրենազրկման:

Արցախը եղել է եւ կլինի հայկական մեր միասնական ու վճռական ջանքերի միջոցով՝ ի հեճուկս բոլոր մարտահրավերների»:

Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի խորհրդական Արտակ Բեգլարյանը սոցցանցի իր էջում գրում է. «Ադրբեջանը շարունակում է փակ պահել Արցախ-Հայաստան միակ ճանապարհը Շուշիի հատվածում արդեն շուրջ 5 ժամ:

«Քաղաքացիական» ու «բնապահպանական» քողի ներքո ադրբեջանական հատուկ ծառայողները հանցագործություններ են իրականացնում ադրբեջանական պետության ու ալիեւյան ռեժիմի անունից: Այս միջոցով Ադրբեջանը ձգտում է հումանիտար աղետ առաջացնել Արցախում, ահաբեկել ու խուճապի ենթարկել մեր լիովին շրջափակված 120,000 բնակչությանը, ինչպես նաեւ հեղինակազրկել ռուս խաղաղապահների առաքելությունը:

Ադրբեջանական կողմը չարաչար սխալվում է ճնշման այս միջոցի կիրառման հարցում, եթե մտածում է, որ դրա հետեւանքով զիջման ենք գնալու մեր արժեքների, սկզբունքների ու իրավունքների հաշվին: Մեր վճռականությունն անկոտրում է մեր սեփական հայրենիքում ապրելու եւ սեփական ճակատագիրը տնօրինելու առումով»:

Արցախի ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը նույնպես անդրադարձել է խնդրին.

«Դեկտեմբերի 12-ին՝ ժամը 10:30-ին, ադրբեջանական կողմը 2-րդ անգամ փակել է Արցախը Հայաստանին կապող միակ միջպետական մայրուղին:

Աննախադեպ վտանգված է Արցախի Հանրապետության եւ Արցախի ժողովրդի լիարժեք կյանքի եւ ապրելու իրավունքը:

Փակելով միջանցքը՝ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը հետապնդում է մի քանի նպատակ.

- փոխել ստատուս քվոն, որը ստեղծվել է 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո,
- վարկաբեկել ռուս խաղաղապահ ուժերի դերակատարությունը,
- ստուգել մեր զգոնությունը, եթե բացակայում է, հայաթափել Արցախը:

Կոչ ենք անում միջազգային հանրության շահագրգիռ կազմակերպություններին խստորեն դատապարտել Ադրբեջանի սադրիչ գործողությունները եւ ադեկվատ զսպման մեխանիզներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ:

Դիմում ենք ՀՀ իշխանություններին եւ ժողովրդին, սփյուռքահայությանը, Արցախում ապրող մեր հայրենակիցներին, հանուն Հայաստանի սահմանամերձ շրջանների եւ Արցախի Հանրապետության պաշտպանության, մի կողմ դնել ներքին տարաձայնությունները, այլապես վաղը ուշ կլինի»:

Հայտարարությամբ են հանդերձ եկել նաեւ Արցախի ԱԺ խմբակցությունները.

«Արցախի խաղաղ բնակչության նկատմամբ ֆոսֆորային ռումբեր օգտագործած ադրբեջանցիները բնապահպանական պատրվակով վերջին օրերին երկրորդ անգամ արգելափակեցին Ստեփանակերտ-Գորիս կյանքի ճանապարհը՝ նոյեմբերի 9(10)-ի եռակողմ համաձայնագրով միջանցքի կարգավիճակ ստացած մայրուղին:

Խստորեն դատապարտում ենք Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից կազմակերպված սադրիչ գործողությունները, որոնք միտված են տարածաշրջանում իրավիճակի ապակայունացմանը: Դիմում ենք Արցախի Հանրապետության քաղաքացիներին՝ ցուցաբերել զսպվածություն, լինել զգոն, որպեսզի միասնական ջանքերով կանխենք ադրբեջանցիների ցանկացած սադրիչ գործողություն: Իր գոյապայքարի ընթացքում բազում դժվարություններ հաղթահարած մեր ժողովուրդը այս անգամ էլ կդիմակայի առկա եւ ապագա մարտահրավերներին: Միջազգային հանրությանը կոչ ենք անում կոնկրետ քայլերով գործողություններ ձեռնարկել՝ զսպելու Ադրբեջանի ագրեսիվ նկրտումները: Ռուս խաղաղապահներին հորդորում ենք եռակողմ համաձայնագրի շրջանակում առավել կոշտ միջոցներով կանխել ադրբեջանցիների նմանօրինակ հակամարդկային գործողությունները»:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՅԹԵՑՐԵԼ Է

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ երեկ՝ դեկտեմբերի 11-ին, Շինուհայր գյուղի բնակիչ 57-ամյա Պ. Ս.-Ն ինքնասպանություն է գործել՝ իր տանը կից հողատարածքում նռնակը պայթեցնելով: Մեզ բնակիչները հայտնեցին, որ քաղաքացին միայնակ էր բնակվում եւ մասնակցել էր արցախյան երկու պատերազմներին, հարեւանին հրահանգել է չմոտենալ, հեռանալ տարածքից, որից հետո նրա աչքի առաջ պայթեցրել է նռնակը:

ԽԵՂԴԵԼ Է ՏԱՏԻՆ

Երեկ առավոտյան սպանություն է տեղի ունեցել Աբովյան քաղաքում: ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ երեկ՝ դեկտեմբերի 12-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, Աբովյան քաղաքում սպանություն է տեղի ունեցել: Ըստ նախնական տեղեկությունների՝ առողջական խնդիրներ ունեցող թոռը խեղդամահ է արել մոտ 80 տարեկան տատին եւ դիմել փախուստի: Ի դեպ, ArmLur.am-ի հայտնի դարձավ, որ թոռը բնակվում է այլ հասցեում, ազգությամբ եզդի է:

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է ԸՆԿԵՐՈՋԸ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ սպանություն է տեղի ունեցել Չարենցավան քաղաքում: Երկու տղամարդիկ, որոնք ընկերներ են եղել, վիճել են միմյանց հետ, որից հետո նրանցից մեկը դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել ընկերոջը: Ըստ ArmLur.am-ին հասած տեղեկությունների՝ դանակի հարվածներ ստացած տղամարդու կյանքը փրկել չի հաջողվել: Ի դեպ, ըստ լուրերի, վիճաբանած տղամարդիկ գինովցած են եղել:

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ

Այս տարվա հունիսի 23-ին, կառավարության որոշմամբ, հայտարարվեց պահեստազորի առաջին խմբի առաջին եւ երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական եւ սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2022 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 30-ը: Վարժական հավաքներին կներգրավեն մինչեւ 1444 քաղաքացու, որոնցից 1249-ը՝ շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի, 65-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 130-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ՝ համազորային, հրթիռահրետանային մասնագիտություններով: Հավաքներից խուսափողներ են եղել, որոնք հայտնվել են դատարանում: Եղիա Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Երեւանի թիվ 2 ստորաբաժանումում՝ որպես պահեստազորային, 24.06.2022թ. ներկայացել է ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Երեւանի թիվ 2 տարածքային ստորաբաժանում, սակայն հրաժարվել է ՀՀ կառավարության 23.06.2022թ. թիվ 941-Ն որոշմամբ՝ օգոստոսի 01-ից մինչեւ հոկտեմբերի 30-ը հայտարարված վարժական հավաքին մասնակցելուց՝ չստանալով վարժական հավաքի վայր մեկնելու համար ծանուցագիրը, եւ խախտելով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները՝ խուսափել է 2022թ. օգոստոսի 01-ից մինչեւ 2022թ. հոկտեմբերի 30-ն անցկացվող վարժական հավաքներից՝ այդ վարժական հավաքից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Պարզվել են 2021թ. դեկտեմբերի 31-ին ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Մ.Թ.-ի սպանության դեպքի հանգամանքները:

Դեպքի առթիվ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայազորային քննչական բաժնում իրականացված բազմակողմանի քննությամբ հիմնավորվել է, որ նշված օրը՝ ժամը 09:00-ից 11:00-ն ընկած ժամանակահատվածում՝ դիտակետի ներսում դիտորդի պարտականությունները կատարելու ընթացքում՝ զրույցի ժամանակ, պարտադիր ժամկետային զինծառայող Մ.Թ.-ն հայհոյանքներ է հնչեցրել համածառայող Է.Բ.-ի հասցեին: Դրանից հետո, ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, վերջինս իրեն ամրակցված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգի ապահովիչը դնելով մենահատ դիրքի վրա, լիցքավորել է այն եւ մեկ կրակոց արձակել Մ.Թ.-ի ուղղությամբ: Վերջինս գլխի շրջանում ստացած հրազենային վնասվածքից հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ պարտադիր ժամկետային զինծառայող Է.Բ-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է գործող Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասին): Վերջինիս նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է: Դատավարական հսկողություն իրականացնող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը, որը քրեական վարույթի նյութերի հետ ուղարկվել է դատարան՝ գործն ըստ էության քննելու համար:

ՀԵՏԱԽՈՒՋՎՈՂ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի 8-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո օդանավակայանում հայտնաբերվել եւ գծային բաժին է տարվել Հովհաննես Ե.-ն, որը ապրիլի 9-ից ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի մեղադրանքով: Խափանման միջոցը՝ ստորագրություն:

- *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 9-ից 12-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 118 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԵԼ Է

Տավուշի մարզպետարանի ինտերնետային, պաշտոնական կայքը հայտնում է. «Դեկտեմբերի 8-9-ը Տավուշի մարզպետարանի հանդիսությունների դահլիճում եւ կից ուսումնական կենտրոնում կազմակերպվել էր «Բազմաչափ աղքատություն. թվեր, համայնքներ, պատկերներ» տվյալների ցուցահանդես: Ցուցահանդեսի նպատակն էր հանրամատչելի ձեւով ներկայացնել աղքատության եւ սոցիալական ծառայությունների վերաբերյալ Տավուշի մարզում իրականացված հետազոտությունների արդյունքները: Մուտքն ազատ էր: Ցուցահանդեսի մասնակիցները ինտերակտիվ ձեւաչափով ծանոթացան արդյունքներին, մեթոդաբանությանն ու քննարկեցին ոլորտի վերաբերյալ իրենց հուզող հարցերը: Ցուցահանդեսը կյանքի է կոչվել Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» 3-ամյա ծրագրի շրջանակներում: Սննդամթերքի եւ այլ ապրանքների, տարբեր ծառայությունների գնաճի, Տավուշի մարզում աճեցրած գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունների պատճառով Տավուշում վերջին տարիներին աղքատությունն ավելի է աճել: Տավուշի մարզպետարանի շենքի տարածքում բացված ցուցահանդեսի մուտքը ազատ չէր կարող լինել, քանի որ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանի օրոք մարզպետարանի շենքի առաջին հարկում մետաղյա արգելափակոց են տեղադրել՝ փակելով քաղաքացիների մուտքը:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԶՈՒԳԱՐԱՆՆԵՐ

Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելի մուտքի մոտ գտնվող երկու փակ զուգարանները մեր կենցաղային անտիմշակույթի նյութական վկայություններ են: Զուգարաններից մեկը կառուցվել է տարիներ առաջ ինչ-որ ծրագրով, այն երկու մուտք ունի՝ տղամարդկանց եւ կանանց համար: Մյուս զուգարանը թիթեղից սարքված անշուք պետքարան է: Ճանապարհային դեպարտամենտին չի մտահոգում, որ միջպետական ավտոճանապարհի եզրին գտնվող զուգարանները տարիներ շարունակ փակ են: Տավուշի մարզում զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն ներկայացնող հուշարձաններ կան՝ Հաղարծին եւ Գոշավանք վանական համալիրները, Մակարավանքը եւ այլն, այդ ճանապարհով նաեւ շատ օտարերկրացի զբոսաշրջիկներ են երթեւեկում: Կառավարության եւ Էկոնոմիկայի նախարարության շենքերի զուգարանները պետական բյուջեի տասնյակ միլիոնավոր դրամներով վերանորոգում են, իսկ միջպետական ավտոճանապահի եզրին գտնվող զուգարանները ո՞վ պետք է նորոգի, դրանց տիրություն անի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՒՄ

Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրումը կշարունակվի մինչեւ 2023 թվականի հուլիսի 1-ը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը միաժամանակ նախատեսում է ընդլայնել անկանխիկ գործառնությունների շրջանակը՝ դրանցում ներառելով ՊՈՍ-տերմինալներից բացի նմանատիպ այլ սարքերի միջոցով կատարված անկանխիկ վճարումները, օրինակ՝ ՀՀ տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կայքերի միջոցով առցանց գնումներ կատարելիս կամ առցանց կոմունալ վճարներ վճարելիս: Ի դեպ, այս տարվա սեպտեմբեր ամսին հետվճարի գումարը կազմել է շուրջ 120 մլն դրամ, հոկտեմբերին՝ 131 մլն դրամ, նոյեմբերին՝167 մլն դրամ:

Նշենք, որ հուլիսի 1-ից մինչեւ հոկտեմբեր ամիսն անկանխիկ գործարք են կատարել շուրջ 49 հազար 978 կենսաթոշակառուներ: Արդյունքում առկա են շուրջ 1 մլրդ 950 մլն անկանխիկ գործարքներ, որի դիմաց ՀՀ պետական բյուջեից փոխանցվել է հետվճար՝շուրջ 195 մլն դրամ, որը յուրաքանչյուր թոշակառուի հաշվարկով կազմում է միջինը 3100 դրամ:

Նշենք, որ կենսաթոշակառուների ծախսերն ուղղվել են առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռք բերմանը՝ դեղորայք, սննդամթերք եւ կոմունալ վճարումներին:

«Պետական նպաստների մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ընտանեկան ու սոցիալական նպաստների, ինչպես նաեւ հրատապ օգնության վճարումը կատարվելու է անկանխիկ եղանակով՝բանկերի միջոցով:

Վճարող բանկն ընտրում է ընտանիքի չափահաս այն անդամը, ով ներկայացնում է համապատասխան նպաստ կամ հրատապ օգնություն նշանակելու դիմում: Բացառություն կկազմեն այն դեպքերը, երբ նպաստ կամ հրատապ օգնություն նշանակելու դիմումը ներկայացնող ընտանիքի չափահաս անդամի 75 տարին լրացել է, կամ նա ճանաչվել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ: Այս դեպքում նպաստ նշանակելու դիմումը ներկայացնող անձն ինքն է ընտրում վճարման եղանակը՝ կանխիկ կամ անկանխիկ. այս մասին հայտարարություն է տարածել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

Համակարգը կներդրվի փուլերով. քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում 2023թ. փետրվարի 1-ից հետո նպաստ կամ հրատապ օգնություն նշանակելու դիմում ներկայացնելու դեպքում վճարման եղանակը կորոշվի՝հաշվի առնելով դիմում ներկայացրած անձի տարիքը կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունենալու կամ չունենալու հանգամանքը: Կանխիկ եղանակով ստացողները վճարման եղանակը փոխելու եւ բանկ ընտրելու համար կարող են դիմել Միասնական սոցիալական ծառայության՝ բնակության վայրը սպասարկող տարածքային կենտրոն:

Եթե մինչեւ 2023թ. փետրվարի 1-ը ներկայացված դիմումների հիման վրա քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում նշանակված նպաստը կամ հրատապ օգնությունը 2023թ. փետրվարի 1-ից հետո կշարունակվեն վճարվել կանխիկ եղանակով, եւ եթե չի ներկայացվի վճարման եղանակը փոխելու ու բանկ ընտրելու դիմում, ապա 2023թ. հուլիսի 1-ից գումարները կվճարվեն բացառապես անկանխիկ եղանակով՝ ծրագրային գործիքով ընտրված բանկի միջոցով: Բացառություն կկազմեն այն անձինք, ում 75 տարին լրացել է, կամ նա ճանաչվել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Ո՞ՐՆ Է ՊԱՏՃԱՌԸ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը հրաժարականի դիմում է ներկայացրել: Այս մասին կառավարությանը մոտ կանգնած մեր աղբյուրներն են փոխանցում: «Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ էր գրել, որ Մաթեւոսյանի գլխին սեւ ամպեր են կուտակված, ու կառավարությունը մտադիր է հրաժեշտ տալ նրան: «Չի բացառվում՝ Փաշինյանն առաջիկայում նրան հրաժարական տալու դիմում գրել տա»,- գրել էր թերթը: ArmLur.am-ի տեղեկություններով՝ փոխվարչապետի՝ հրաժարական գրելու դիմումը կապված է եղել Բրյուսովի անվան պետական համալսարանի՝ վերջերս կայացած ռեկտորի ընտրությունների հետ, ինչի ժամանակ գործող ռեկտոր Կարինե Հարությունյանը վերընտրվել էր: Բանն այն է, որ Համբարձում Մաթեւոսյանը Բրյուսովի համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, ու վարչապետ Նիկոլ Փաշինյանին դուր չի եկել, որ իրենց ցանկալի թեկնածուն (ըստ երեւույթին՝Լեզվի պետական կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը) չի ընտրվել: Չնայած իշխանությունների կողմից իրականացվող ակնհայտ ու ծածուկ ճնշումներին՝դեկտեմբերի 9-ին Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր է վերընտրվել Կարինե Հարությունյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանություններն անգամ սեփական լրատվամիջոցներով էին փորձում ստվերել Հարությունյանի գործունեությունն ու ռեկտորի ընտրություններից մեկ օր առաջ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող լրատվամիջոցով գրում էին Պետական վերահսկողական ծառայության՝բուհում իրականացրած ստուգումների մասին: «Ժողովուրդ» օրաթերթը դեկտեմբերի 9-ին գրել էր նաեւ, որ Բրյուսովում ռեկտորի պաշտոնում սեփական թեկնածուին ունենալու ակնկալիքով իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, ուսանողների, նրանց ծնողների վրա տարբեր ճնշումներ բանեցնելով, փորձում էր Գյուրջինյանի համար ճանապարհ հարթել, ինչը, փաստորեն, չի ստացվել. բուհի խորհուրդը նախընտրել է գործող ռեկտորին:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԹՎԱՔԱՆԱԿԸ ՊԱԿԱՍԵԼ Է

Հայաստանի բնակչությունը վերջին 10 տարիների ընթացքում 60.000-ով պակասել է: ArmLur.am-ը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ 10 տարիների ընթացքում ՀՀ բնակչության թվաքանակը 3 մլն 21 հազար 400-ից պակասել է՝ դառնալով 2 մլն 961 հազար 400: Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ Հայաստանը բնութագրվում է բնակչության նվազումով եւ ժողովրդագրական ծերացմամբ, ինչը պայմանավորված է ծնելիության ցածր մակարդակով եւ արտագաղթի բարձր տեմպերով:

Օրինակ՝ 2021 թվականին Հայաստանում զգալիորեն կրճատվել է տղամարդկանց եւ կանանց կյանքի միջին տեւողությունը, շարունակել է աճել կանանց եւ տղամարդկանց ամուսնության միջին տարիքը եւ ավելի քիչ երեխաներ ունենալու միտումը:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 36 ՃՏՊ. 58 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(1)

«ԱՐԱՏԱՖԱՐՄ» ՍՊԸ -ի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին

Թիվ ՍՆԴ/0675/04/21 սնանկության գործով ՀՀ Սնանկության դատարանը (դատավոր Ա. Խաչատրյան) 07.12.2022թ. կայացրել է որոշում՝ «ԱՐԱՏԱՖԱՐՄ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 05548036) նկատմամբ լուծարման վարույթ սկսելու եւ գործունեությունը կասեցնելու մասին:

Սնանկության գործով կառավարիչ՝ Էդուարդ Սերոբյան: Հեռ՝ +374-77-64-22-00:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(2)

Կազմակերպիչներ «Բի Էս Թի» ՍՊԸ-ի եւ «Ֆլորես աճուրդի տուն» ՍՊԸ-ի կողմից, այդ թվում՝ ««ԱԿՍՈՆ» ապրանքաիումքային բորսա» ՍՊԸ-ի հարթակում իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2022թ.-ի դեկտեմբերի 30-ը, երկարաձգվում են մինչեւ 2023թ.-ի հուլիսի 03-ը ներառյալ: Լրացուցիչ տեղեկություններ համար զանգահարել (011) 52-61-85 կամ այցելել բորսա՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցեով, ժամը 9:30-17:00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(3)

«Ակսոն» ԱՀ բորսայի հարթակում (ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) 29.12.2022թ.-ից յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 12:00-ից, իրականացվելու է «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ» հիմնադրամի կողմից ներկայացված՝ հիմնականում օգտագործված, վնասված, հնամաշ գրասենյակային աթոռների, պահարանների, սեղանների, գրատախտակների, գրապահարանների, համակարգչի սեղանների, սեղան-պահարանների, բազմոցների, օդափոխիչների, ֆոտոխցիկների, տպիչ սարքերի, հեռուստացույցերի, համակարգիչների, մոնիտորների, սառնարանների, ջրի ապարատների, շերտավարագույրների եւ այլ գույքերի աճուրդային վաճառքը՝ «դասական» (գնի բարձրացմամբ) եղանակով:

Մանրամասն տեղեկությունների, ինչպես նաեւ բորսայի հարթակում վաճառվող այլ լոտերի ցանկին ծանոթանալու համար կարող եք այցելել www.akson.am (www.borsa.am) կայքի «վաճառվող լոտեր» բաժին կամ զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով:

ՆՈՐ ՏՐՈԼԵՅԲՈՒՄՆԵՐ

Երեւանում նոր տրոլեյբուսների շահագործումը պատշաճ կազմակերպելու նպատակով դեկտեմբերի 19-ին նախատեսված է բացել մրցույթ. եթե հաղթող լինի, մինչեւ տրոլեյբուսների ներկրումը աշխատանքները կատարված կլինեն: Այս մասին երեկ՝ դեկտեմբերի 12-ին, նշվել է Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական հերթական խորհրդակցության ժամանակ: Քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հետարքրքվեց, թե ուր են հասել տրոլեյբուսները: «Հասել են Ղազախստան: Ղազախստանից դուրս են գալիս: Մինչեւ հունվարի 3-ը կհասնեն 11-ը, մինչեւ հունվարի 5-ը՝ մնացած 4-ը»,- զեկուցեց քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը:

«ԱՎԱՆ»

ԽՆԴԻՐՆԵՐ՝ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության ներկայացուցիչները սույն թվականի դեկտեմբերի 1-ին Պաշտպանի հանձնարարությամբ չհայտարարված մշտադիտարկման այց են իրականացրել ՀՀ առողջապահության նախարարության «Ավան» հոգեկան առողջության կենտրոն:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են հոգեբուժական կազմակերպությունում անձանց պահման պայմանները, նրանց իրավունքների ապահովման վիճակը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին, ոչ հոժարակամ եւ անգործունակ ճանաչված անձանց բուժման ընթացակարգերը, ինչպես նաեւ հաստատությունում պահվող պացիենտներին առնչվող փաստաթղթերը:

Հատուկ ուշադրություն է դարձվել նորաստեղծ մանկական բաժանմունքում երեխաների պահման պայմաններին եւ երեխաների նկատմամբ զսպման միջոցների կիրառման հետ կապված հարցերին:

Մշտադիտարկման այցի ընթացքում հոգեբուժական կազմակերպությունում, կորոնավիրուսային (COVID-19) վարակի հաստատված դեպքի արձանագրմամբ պայմանավորված, Կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքների մեթոդաբանությունը տեղում փոփոխվել է, աշխատանքներն իրականացվել են համաճարակային կանոնները պահպանելու հատուկ ընթացակարգով: Ստուգվել են կորոնավիրուսային (COVID-19) վարակով պայմանավորված կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման վիճակը, սանիտարահիգիենիկ պայմանները եւ այլն:

Մշտադիտարկմանը ներգրավված են եղել իրավաբաններ, բժիշկներ եւ հոգեբան, այն իրականացվել է հատուկ մեթոդաբանությամբ եւ չափիչ սարքերի օգտագործմամբ (տարածություն, ջերմություն եւ այլն):

Այցի արդյունքում վեր են հանվել հետեւյալ հիմնական խնդիրները.

-կենցաղային, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ, առկա է բարելավման եւ վերանորոգման անհրաժեշտություն,

-տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող անձանց պահանջմունքներին համապատասխան հարմարեցված ֆիզիկական միջավայրի բացակայություն,

-բժշկական փաստաթղթերի վարման հետ կապված խախտումներ կամ այդ փաստաթղթերի ոչ պատշաճ վարում,

-հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ արտաքին աշխարհի հետ կապի եւ զբաղվածության ապահովման հետ կապված խնդիրներ,

-հոժարակամ եւ ոչ հոժարակամ բուժման իրավական ընթացակարգերի պահպանման հետ կապված խնդիրներ, որոնք ողջ երկրում ունեն համակարգային բնույթ եւ շարունակ լուծում չեն ստանում՝ հանգեցնելով մարդու սահմանադրական իրավունքների կոպիտ խախտումների,

-այլընտրանքային, ոչ դեղորայքային բուժման մեթոդների կիրառման բացակայություն,

-կորոնավիրուսային (COVID-19) վարակի կանխարգելման տեսանկյունից արձանագրվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ հոգեբուժական կազմակերպություն այցելուների մուտքի ժամանակ պաշտպանիչ միջոցների կիրառման, ջերմաչափման, սոցիալական հեռավորության պահպանման եւ այլն,

-երեխաների համար նախատեսված բաժանմունքում զսպման միջոցների կիրառման հետ կապված խնդիրներ,

-տարբեր սեռի երեխաներին նույն հիվանդասենյակում պահելու հետ կապված խնդիր,

-կանանց բաժանմունքում՝ հեռախոսակապի հասանելիության խնդիր,

-հոգեբուժական կազմակերպության աշխատակիցների աշխատանքային պայմաններին առնչվող խնդիրներ եւ այլ:

Ողջունելի է հոգեբուժական կազմակերպության աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման նոր մեխանիզմների ներդրումը, որը նպաստել է նրանց աշխատավարձի բարձրացմանը, սակայն դեռեւս պետք է քայլեր ձեռնարկել հոգեբույժների թափուր հաստիքները համալրելու ուղղությամբ, ինչպես նաեւ աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումների, կարողությունների եւ հմտությունների զարգացման ուղղությամբ:

Արձանագրված խնդիրները Պաշտպանի ներկայացուցիչները քննարկել են հոգեբուժական հաստատության տնօրինության հետ: Խնդիրները կամփոփվեն, եւ դրանց լուծմանն ուղղված առաջարկները համապատասխան վերլուծության հետ միասին կներկայացվեն իրավասու մարմիններին:

Մշտադիտարկման այցի ընթացքում հոգեբուժական կազմակերպության տնօրինությունն ու բժշկական անձնակազմը ակտիվ համագործակցել են Պաշտպանի ներկայացուցիչների հետ, եւ աշխատանքի խոչընդոտներ չեն ստեղծվել:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԴԵՊԻ ԽԵԼԱՑԻ ՈՒ ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ավելի քան 200 մասնակից եւ 5000 օնլայն հանդիսատես է հետեւում Երեւանում անցկացվող Silicon Mountains միջազգային տեխնոլոգիական գագաթնաժողովին:

Հայ եւ արտասահմանցի փորձագետները հավաքվել են քննարկելու չորրորդ արդյունաբերական հեղափոխության տեսլականը, տենդենցներն ու մարտահրավերները: Գագաթնաժողովը նվիրված է տնտեսությունում խելացի թվային լուծումների ներդրմանը:

20-ից ավելի բանախոս խոսել են խելացի տնտեսության, խելացի կառավարման, խելացի ենթակառուցվածքների եւ, իհարկե, խելացի ու թվային բանկային համակարգի մասին: Թեմայի շուրջ իր տեսակետն է հայտնել «Ակբա» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Երեք կարեւոր կոմպոնենտ գոյություն ունի ժամանակակից բանկինգ իրականացնելու համար՝ առաջինը լավ տեխնոլոգիաներն են, երկրորդը՝ սմարթ, ես կասեի՝ թվային-սմարթ աշխատակիցը, եւ երրորդը, իհարկե, սմարթ-թվային հաճախորդը: Այս երեքի համադրությունը ապահովում է սմարթ բանկինգի իրականացումը»,- նշում է «Ակբա» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

Բանախոսներն անդրադարձել են նաեւ բանկային ոլորտում անվտանգության ապահովման խնդիրներին.

Հայաստանյան բանկերը հաճախորդների տվյալների անվտանգությանը շատ լուրջ են վերաբերվում:

«Անվտանգության բարձրացման համար շատ կարեւոր է նաեւ «քլաուդային» տեխնոլոգիաների օգտագործումը՝ լավագույն տեխնոլոգիական լուծումների հիման վրա: Սա չափազանց կարեւոր է, եւ պետք չէ «վախենալ» այս տեխնոլոգիաներից, եւ պետք է մտածենք մեր երկրում «քլաուդ» ստեղծելու մասին»,- ընդգծել է «Ակբա» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը՝ հավելելով, որ բանկային տվյալների անվտանգության ապահովման գործում մեծ դեր ունի նաեւ հաճախորդների ֆինանսական գրագիտությունը, որի համար կրթական ծրագրի անհրաժեշտություն կա, չնայած որ Հայաստանը ֆինանսական կրթության ներդրման առումով համաշխարհային մակարդակում օրինակելի է:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՄԵՐԳ

ՕՀԱՆ ԴՈՒՐՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԸ

Դեկտեմբերի 9-ին Կամերային երաժշտության ազգային կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ Օհան Դուրյանի 100-ամյակին նվիրված հուշ-երեկոն:

Միջոցառումը կազմակերպվել էր «Կոմիտաս» միջազգային փառատոնի շրջանակներում «Հայ փոքրիկ երգիչներ» ընկերակցության կողմից՝ ԿԳՄՍ նախարարության մասնակի աջակցությամբ:

Բեմում էին Տիգրան Հեքեքյանի ղեկավարած «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը, ում եւ Օհան Դուրյանի միջեւ սերտ շփում եւ հարազատության երկուստեք զգացում կար ականավոր դիրիժորի կյանքի օրոք, իսկ հեռանալուց հետո նույնը պահպանվեց մաեստրոյի սիրելի տիկնոջ՝ Ալիս Դուրյանի հետ:

Տիկին Ալիսի խնդրանքով եւ պնդմամբ էր նաեւ, որ երեկոյին սիրով իրենց մասնակցությունը բերեցին Տիգրան Հեքեքյանի երեխաները, ում ջերմ բարեկամությունը մաեստրո Դուրյանի հետ սկսվել է նրանց ծննդյան պահից՝ թավջութակահար Նարեկ Հեքեքյանը, հոբոյահար Հայկ Հեքեքյանը, դաշնակահար Աննա Հեքեքյանը:

«Վարպետի ջերմ ու թրթիռով վերաբերմունքը՝ առհասարակ երեխաների, փոքրերի նկատմամբ, հայտնի փաստ է», - պատմեց Տիգրան Հեքեքյանը, նաեւ հավելեց, որ կրտսեր Հեքեքյանների համար մեծ պատասխանատվություն է եւ նվիրական պահ հուշ-երեկոյի ընթացքում հայ մեծանուն արտիստի եւ իրենց «մեծ պապիկի» հիշատակին երաժշտական կատարում նվիրելու հնարավորությունը:

Համերգի ընթացքում խոսքով հանդես եկան Օհան Դուրյանի երկրպագու եւ բարեկամ Վահան Վարդապետյանը, Դանիել Երաժիշտը: Խոսեցին Վարպետի կյանքի դրվագներից, նրա եւ Տիգրան Հեքեքյանի բարեկամության մասին, Օհան Դուրյանի հիացմունքի մասին, որ միշտ ապրում էր «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի ելույթներն ունկնդրելիս:

Ունկնդիրը ողջ համերգի ընթացքում սիրով վայելեց երգչախմբի եւ մենակատարների յուրաքանչյուր կատարում: Առանձնահատուկ ոգեւորությամբ ընդունվեց նաեւ արգենտինացի կոմպոզիտոր Մ. Պալմերիի՝ հատուկ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի 30-ամյա հոբելյանի առիթով գրած «Միսսա տանգո Արմենիա» ստեղծագործությունը՝ երգչախմբի, դաշնամուրի եւ բանդոնեոնի համար: Բանդոնեոնի նվագամասը այս միջոցառման համար սիրով մեկ շաբաթում սովորեց եւ հիանալի կերպով կատարեց ակորդեոնահար Գագիկ Դանիելյանը:

Գեղեցիկ երեկո ստացվեց: Եւ այս հուշ-համերգը ոչ միայն բարձրակարգ երաժշտության եւ անմնացորդ աշխատանքի մասին հաշվետվություն էր, ինչպիսին հանդիսանում է Տիգրան Հեքեքյանի երգչախմբի յուրաքանչյուր ելույթ, այլ նախ սիրո մասին էր՝ Օհան Դուրյանի անձի եւ արվեստի, նրա հիշատակի հանդեպ տածած սիրո: Նվիրման, խոնարհումի երեկո, երգ-պատում՝ մեծ երաժշտի եւ մարդու մասին:

Գ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Բաթումի փողոց, 17 շենք, 50 հասցեում գտնվող 66,68 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10100000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Նոր Հաճն, գյուղ Քարաշամբ, 2-րդ փողոց, 31 հասցեում գտնվող 346,4 ք.մ. մակերեսով բնակելի տուն – 0.18 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16900000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 29.12.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ԲԱՑԻԿ

Մինչ մենք քնած էինք, հրապարակվել է Չարլզ III թագավորի եւ Կամիլա Փարքեր-Բոուլզի սուրբծննդյան առաջին բացիկը:

Բացիկի լուսանկարում զույգը ջերմ ժպտում է Բրեմարյան թագավորությունում կայացած հանդիպման ժամանակ: Կադրն արվել է լուսանկարիչ Սեմ Հուսեյնի կողմից Էլիզաբեթ II-ի մահից կարճ ժամանակ առաջ: «Շնորհավորում ենք Ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդի կապակցությամբ», - գրված է բացիկի վրա:

«ԱՐԱՐԱՏԻՑ» ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Երեւանի «Արարատ»-ի մի շարք ֆուտբոլիստներ հեռացել են ակումբից: «Արարատի» կազմում իրենց ելույթներն ավարտում են Խուան Բրավոն, Էդգար Մալաքյանը, Ալիկ Առաքելյանը, Արտյոմ Պոտապովը, Արման Մկրտչյանը, Բաբու Չամը եւ Տիմուր Պուխովը:

Կոլումբիացի պաշտպան Խուան Բրավոն 2020/21 մրցաշրջանի մեկնարկից առաջ էր միացել «Արարատին»: Բարձրագույն խմբում անցկացրած 64 խաղում Բրավոն դարձել է 4 գոլի հեղինակ: Խուան Բրավոն «Արարատի» կազմում նվաճել է Հայաստանի գավաթը:

2020/21 մրցաշրջանից առաջ «Արարատը» համալրած ֆուտբոլիստներից էր նաեւ Էդգար Մալաքյանը: Նա միանգամից դարձավ թիմի առաջատարներից մեկը: Էդգար Մալաքյանը մասնակցել է Բարձրագույն խմբի 59 խաղի եւ դարձել է 10 գոլի հեղինակ, ինչպես նաեւ դարձել է Հայաստանի գավաթակիր:

Ալիկ Առաքելյանը 2021-ի ամռանը համալրեց «Արարատի» շարքերը: Նա «Արարատի» կազմում անցկացրել է առաջնության 44 խաղ եւ դարձել է 5 գոլի հեղինակ:

Դարպասապահ Արտյոմ Պոտապովը նախորդ ամռանն էր միացել «Արարատին» եւ թիմի հիմնական դարպասապահն էր 2022/23 մրցաշրջանի առաջին հատվածում: Նա անցկացրել է առաջնության 20 հանդիպում:

Արման Մկրտչյանը նույնպես ընթացիկ մրցաշրջանի մեկնարկից առաջ էր միացել «Արարատին»: Նա «Արարատի» մարզաշապիկով Բարձրագույն խմբի 13 հանդիպման է մասնակցել:

Գամբիացի հարձակողական ոճի կիսապաշտպան Բաբու Չամը «Արարատի» կազմում մասնակցել է Բարձրագույն խմբի 8 հանդիպման:

«Արարատի» կազմում իր ելույթներն ավարտում է նաեւ ռուս կիսապաշտպան Տիմուր Պուխովը: Վերջինս մասնակցել է Բարձրագույն խմբի յոթ հանդիպման:

● *Դեկտեմբերի 14-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Նազա՛ր, Նազա՛ր մինչեւ վերջ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ ընթացակարգով է կատարվում կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկումը հաշտեցման հանձնաժողովի կողմից:

Մարգարիտա Լալայան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հաշտեցման հանձնաժողովը ստեղծվելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, պետք է քննարկի կոլեկտիվ աշխատանքային վեճը: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ: Հաշտեցման հանձնաժողովում վեճի քննարկման ընթացքում կողմերի ներկայացուցիչները կարող են հրավիրել մասնագետներ (խորհրդատուներ, փորձագետներ եւ այլն): Գործատուն պարտավոր է ստեղծել անհրաժեշտ պայմաններ հաշտեցման հանձնաժողովի աշխատանքների համար:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշտեցման հանձնաժողովները ձեւավորվում են կոլեկտիվ աշխատանքային վեճի կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից: Հաշտեցման հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ: Հաշտեցման հանձնաժողովը ստեղծվում է առաջադրված պահանջները մերժելու մասին գրավոր որոշումը պահանջներ առաջադրած կողմին տրամադրելու օրվանից հետո՝ յոթ օրվա ընթացքում: Հանձնաժողովի կազմը ամրագրվում է արձանագրությամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ իրավունքներ ունի այն անձը, որն ունի ջրամատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա:

Էդգար Գասպարյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Խմելու ջրի մատակարարման եւ (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձին իրավունք է տրվում եւ պարտավորեցվում է սույն օրենսգրքով, իրավական այլ ակտերով եւ լիցենզիայով սահմանված դեպքերում ու կարգով խմելու ջրի մատակարարման եւ (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ մատուցել բաժանորդներին, իրականացնել ջրի մեծածախ վաճառք, ինչպես նաեւ իր սպասարկման տարածքում կառավարել, շահագործել, պահպանել, բարելավել եւ ընդլայնել իր ջրային համակարգը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ոռոգման ջրամատակարարման լիցենզիա ունեցող անձին իրավունք է տրվում եւ պարտավորեցվում է ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցել բաժանորդներին, համայնքներին եւ ջրօգտագործողների ընկերություններին (ջրօգտագործողների ընկերությունների միություններին), ինչպես նաեւ կառավարել, շահագործել, պահպանել, բարելավել եւ ընդլայնել իր ջրային համակարգը, իրականացնել ջրի մեծածախ վաճառք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի քաղաքապետարանի առեւտրի եւ ծառայությունների վարչությունը տեսանյութ է հրապարակել՝ նշելով, որ բեռնատար ավտոմեքենայի վարորդը շփոթել էր ճանապարհը եւ հայտնվել Աբովյան փողոցում՝ վնասելով տոնական լուսավորությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.12.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: